

բնական (կամ աստուածային) իրողութիւններու:

Բ. Բարոյական գեր-բնապաշտութիւն (Moral Super-Naturalism)

Այս ուղղութեան հետեւորդները, բարոյական արժէքները կ'առնչեն գերադաս ատեանի մը կամ Աստուծոյ հետ, բան մը որ անհատէն կախեալ չէ եւ կարելի չէ բնական միջոցներով բացատրել:

• ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱԿԱ-ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Այս ուղղութեան հետեւորդները, կոչենք՝ «հակա-իրապաշտներ», իրականութեան մէջ բարոյական իրապաշտութիւնը քննադատողներն են: Անոնք բոլորովին կը մերժեն՝ բարոյական իրողութիւններու առարկայական գոյութիւնը:

Բարոյական հակա-իրապաշտութեան կրնան համապատասխանել՝ *կասկածապաշտութիւնը* (Սկեպտիկութիւն–Scepticism) եւ *գաղափարապաշտութիւնը* (Idealism):

4. ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Բարոյական դատողութիւնը ուսումնասիրելու ընթացքին, մետա-բարոյագիտութիւնը նաեւ իմացաբանական հարցադրումներ կը կատարէ, ինչպէս օրինակ.-

- ա) բարոյագիտութեան պարագային կարելի՞ է արդեօք որեւէ բան ճանաչել, իմանալ կամ գիտնալ.
- բ) արդեօք կարելի՞ է բարոյական դատողութեան պարագային ճշմարտացիութեան արժեւորում կատարել եւ զայն՝ *ճիշդ* կամ *սխալ*, *արդար* կամ *անարդար* որակել. կամ
- գ) արդեօք բարոյական կանոններու առնչութեամբ, գոյութիւն ունի՞ ներեթակայական (Intersubjective) կիրառելի պահանջք:

Առաջին հարցադրման հետ անմիջական ու կարեւոր կապ ունին բարոյական հասկացութիւններու ճշգրիտ իմաստները՝ լեզուա-վերլուծական արդի միջոցներով հաստատուած: Այլ խօսքով, պէտք է ճշգրիտ կերպով իմանալ թէ ի՞նչ կը նշանակեն՝ *լաւ* ու *բարի*, *ճիշդ* ու *սխալ*, *արդար* ու *անարդար*, *պարտաւորութիւնը*, *վարմունքը*, *եւայլն ...*:

Իմացաբանական ոլորտէն ներս, բարոյական դատողութեան ուսումնասիրութիւնը առանց որեւէ արգելքի կ'ենթարկուի՝ բանական քննադատութեան: Այլ խօսքով, մեր բարոյական դատողութիւնը ենթակայ է սխալականութեան: Արդարեւ, մետա-բարոյագիտութեան պարտականութիւնն է բացայայտել, թէ ի՞նչ կերպով եւ ի՞նչ տարողութեամբ կարելի է բարոյականութիւնը քննադատել: Այլ խօսքով, վերոյիշեալ բարոյական իրապաշտութիւնն ու հակա-իրապաշտութիւնը պէտք է անցնին այս իմացաբանական քննադատութեան ուղիով եւ անոնցմէ իւրաքանչիւրը պէտք է ինքզինք արդարացնէ: